




## Ա. ԵՐԵՄԵԱՆ

### ԺԷ ԴԱՐԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԳՐՉԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆ (ԻԶԹ=1640 թ.)

(Էջեր ճայ գրչագրական և մանրանկարչական  
արվեստի պատմությունից)

  
պահանում ժէ դարում գրված  
այս ձեռագիր ավետարանի պատ-  
մության էջերը մեզ տանում են  
1640 թվականը։ Դա իրանի Շահ  
Սեֆիի թագավորության ժամանակաշրջանն  
է, երբ Պարսկաստանի հայ ժողովուրդն ապ-  
րում է խաղաղ պայմաններում։ Այդ հանգա-  
մանքը վկայում են նաև Նոր-Ջուղայի պատ-  
մագիր՝ Հարություն Տեր-Հովհանյանցի հե-  
տեւալ տողերը։ Ճետ մեռնելոյ Շահարա-  
սայ մեծի, թոռն նորա Շահսեֆի մանուկ շո-  
րեքտասանամեծայ նստաւ թագաւոր ըստ  
ոմանց 1629, և ըստ ոմանց 1631։ Չորեք-  
տասան ամ թագաւորեաց, յորում ժամանա-  
կի փիճակ ժողովութեանն հայոց, որի Պարս-  
քնթացաւ ըստ կարգին եղելոյ ի ժամանակս

Շահարասայ առաջնոյ, զի սմա ևս սիրելի  
լիել ազգս հայոց՝ տարածեաց առ նոսա  
զջնորդ արքայական, որով մնացին նոքա  
ի խաղաղութեան («Պատմութիւն Նոր-Ջու-  
ղայուա, 1880 թ., Ա հատոր, էջ 80)։

Դա այն պատմաշրջանն էր, երբ Նոր-Ջու-  
ղայի հայ ժողովուրդի սիմաստումն և «քարե-  
պաշտ» իշխանապետ Խոչա Սաֆրազի ա-  
պարանքում հյուրասիրվում է Շահ Արքաս  
Երկրորդ արքան Զեններեց, գործունյա և  
ճարտար մի վաճառական, որի անոնը հրո-  
շակվում է ո՛չ միայն իրանում, այլև եկրո-  
պայում։ Այդ երևույթներն են ընդգծում Նոր-  
Ջուղայի հայոց գերեզմանատանը հանգչող  
Խոչայի տապանաքարի վրա քանդակված  
հետեւալ տողերը։

«Ա. ԻՄ ԱՆՆՄԱՆ ԽՕԶԱՅ, ՈՐ ԷՒՐ ՀԱՅՈՑ ԹԱԳԱԽՈՐ,  
ԱՆՈՒՄԴ ՍԱՖՐԱԶ ԿՈԶԻ ՍՐՄԹԱՅ ԶՈՐԵՂ ԴԱՏԱԽՈՐ.  
ԽԵԼՕՔ, ՔՈ ՃԱՐՏԱՐ ԼԵԶՎԵՏ ԶԱՐՄԱՆԱՐ ԱՄ ԷՆ ԹԱԳԱԽՈՐ,  
ՇԱՅ ԻՇԽԱՆ ՔՈ ՏԵՍՈՒԻՏ ՓԱՓԱԿ՝ ԱՀԵՂԱՏԵՍ ԻՇԽԱՆ ՓԱՌԱԽՈՐ»։

Ժէ դարի նույն շրջանումն էլ լուսավոր,  
առաջադեմ և պայծառ մի հոգեռականի հե-  
րոսական ջանքերով Նոր-Ջուղայի Ամենա-  
փրկիլ վանքը դառնում է մշակութային  
շարժման մի փարու։ Դա թեմի ժամանակի  
առաջնորդ Խաչառու վարդապետ Կեսարա-  
ցին է, որ «քազում աշխատութեամբ» հիմ-  
նում է իրանի և հայկական տպագրության  
պատմության մեջ հոչակած առաջին տպա-  
րանը և 1641 թվականին տպում «Հարանց  
վարքը»։

Ահա այս շրջանում Սպահանում ապրող  
երկու արվեստագետ սարկավագներ գրում են  
մի ձեռագիր ավետարան, որը ժէ դարում

Նոր-Ջուղայից տանում են Սպահանի Բուր-  
վարի գավառի Շավլավա գյուղը, ուր ամ-  
բողք 288 երկար տարիներ Տեր-Հակոբենց  
գերդաստանում խնամքով պահում են։ Այ-  
նուհետեւ՝ 1928 թվականին, նույն ազգատոհ-  
մը ձեռագիրը տանում է Քյազագ գավառը,  
1942 թվականին տեսնում ենք Սուլթանարա-  
դում, իսկ 1945 թվականին՝ իրանի մայրա-  
քաղաքում՝ Թեհրանում, ուր մինչև օրս էլ  
տիրացու Սերոր Տեր-Հակոբյանն առանձին  
գորգուրանքով պահում է։

Ահա՝ գրչագրի սեղմ պատկերը.

Մեծությունը՝ 19×14 սմ., կազմը՝ տախ-  
տակի վրա կարմիր թավշապատ, թերթեր՝

300. Այսուրը՝ բամբակի թուղթ, գրությունը՝ երկայուն, տողերը՝ 21, գիրը՝ բոլորագիր, հանգամանքը՝ բավարար, պակասում են երկու ավետարանիշների նկարները, զարդարությունը սկզբում վրձինված է Մատթեոս ավետարանիշի նկարը, որ բաց գրքի առջև նստած գրում է: Դա կանաչ, մուգ կարմիր և կապույտ գույներով նկարված միջակ վըր-

խորաններ, որոնցից երկուաը տեղ-տեղ զրկվել են իրենց ոճավորության հարազատությունից: Լուսանցազարդերը՝ բազմաթիվ էջերում իշխում են զարդանկարներ և թըռչնազարդեր: Սակայն ավետարանի գեղեցկությունը կազմում են խորանները և գլուխներն սկզբնավորող մանրանկար գեղագրերը: Գրիշները՝ Հովհանք և Սարուխան սարկա-



1640 թվականին Սպահանում մանրանկարված ավետարանի  
376-րդ էջի խորանը

ձինի մի արտադրություն է: Նշենք նաև 280-րդ էջը պատկերող Ղուկաս ավետարանիշը, որ ավետարանը կրծքին դրած, խորհրդավոր հայացքով նայում է: Նկարում կանաչ կարմիր և կապույտ երանգներն իրար են ներաշնակում:

Ավետարանը զարդարում են նաև երեք

վագները, գրչության վայրը՝ Սպահան, ժամանակը՝ 1640 թ.:

Զեռագիր ավետարանի մի երկու նկարները նոր-Զուղայի Ժեղարի նկարչական դրամոցը պատկերող ցայտուն վավերագրեր են: Այդ տեսակետից գեղարվեստական ուրույն արժեք է ներկայացնում 376-րդ էջում կա-

պուտ, կարմիր և կանաչ երանգներով վըրծինված խորանը, որ ժէ դարի առաջին կիսում Նոր-Ձուղայում զարգացած մանրանը՝ կարշական արվեստի պարզ, բայց գեղեցիկ մի ստեղծագործություն է: Զեռագրին առանձին փայլ են տալիս նաև գեղագրերը, որոնք իրենց պարզության մեջ նույր են և տպագորիչն նույնպես գոշագրի գեղեցկությունը կազմում են բոլորագրերը, որոնք երկու տարբեր, բայց իրար շատ նման ճեռագրեր են: Դրանք, իրենց ամբողջությամբ, տպագրված տառերի տպավորություն են թողնում և ցայտուն գաղափար տալիս ժէ դարում Նոր-Ձուղայում զարգացած գոշագրական արվեստի մասին:

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

«Փառք քեզ Հայր Աստուած, գոհութիւն՝ քեզ Աստուած իմ, Յիսուս Քրիստոս, բարերանեալ ես Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ, որ արժանի արարեր զանպիտանն ի յամիրս հասանել ի վերջին գ[ի]ր տառիս: Արդ, ա[կ]հնեալ, գովեալ և բարեբանեալ Սուրբ Երրորդութիւնդ անզրաւ յափտեանս, ամէն:»

1. «Գոհութիւն» բառի առաջին երկու փանկերը՝ «գոհու», գրված են կարմիր թանաքով, իսկ մնացածը՝ սև:

Որ ետ կարողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերջ տառիս այս մարգարտաշար և վարդափիթիթ բուրաստանիս, որ է սա ընտիր օրինակէ: Որ և գրեցաւ սա ի յերկիրս Ասպահան ձեռամբ թ սարկաւագ՝ Ցովսէփայ և Սարովսանի. յիշեցէք ի Քրիստոս. գրեցաւ թվականիս մեր Ռ. Զ. Թ. (1649 թ.), ի թագաւորութեան Շահ Սէֆուն և առաջնորդութեան Տէր Խաչատոր արհեպիսկոպոսի, ի վայելումն մանկանց Սիովնի. Ոմն բարեմիտ և աստուածասէր ի բազում ժամանակէ ցանկայր սմա. որ և ստացաւ զսա ի հայլ վաստակոց իւրոց և յիշատակ Տէր Խսրակէլին, և ծնօղացն՝ Վէլիճանին, Խանաղին, Բալուէ և կողակցին՝ Թանկալթանին և որդոցն Ռականին, Փանոսին և Մարտիրոսին, յիշատակ իւրեանց: Յիշեցէք և Աստուածողորմի ասացէք, ամէն: Յիշեցէք ի Քրիստոս զՏէր Հայրապետն, որ կամակից եղև սուրբ աւետարանիս, ետ գրել և առնուլ. լի սրտի Աստուած ողորմի ասացէք նմա, զի և Աստուած ծեզ ողորմեսցի, ամէն:»

Այստեղ ընդգծենք մի հանգամանք ևս. Նոր-Ձուղայի ժէ դարի հայ մանրանկարչական արուեստն ունի բազմաթիվ ալլ նմուշներ, որոնք կարող են իրենց պատվավոր տեղը գրավել գեղարվեստի պատմության մեջ:

